Հավելված՝
Հայաստանի Հանրապետության
Շիրակի մարզի Գյումրի համայնքի
ավագանու 2015 թվականի
հունիսի 15-ի N 76 -Ա որոշման

ԿԱԶՄՎԱԾ Է 2015 ԹՎԱԿԱՆԻ
ՀՈՒՆԻՍԻ « 15 »-ԻՆ
ԲԱՂԿԱՑԱԾ Է 11 (ՏԱՍՆՄԵԿ) ԹԵՐԹԻՑ
ՏՊԱԳՐՎԱԾ Է ԸՆԴԱՄԵՆԸ 5 ՕՐԻՆԱԿ
ՕՐԻՆԱԿ 1

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է՝

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2015
ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ « 15 »-Ի
ԹԻՎ 76-Ա ՈՐՈՇՄԱՄԲ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

_____ Ս. ԲԱԼԱՍԱՆՅԱՆ

Գ Ր Ա Ն Ց Վ Ա Ծ Է՝

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ
ԱՆՁԱՆՑ ՊԵՏԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐԻ
ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԳՅՈՒՄՐՈՒ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ
ԲԱԺՆԻ ԿՈՂՄԻՑ 13.05.2005թ.
ԳՐԱՆՑՄԱՆ 29.210.02153
ՎԿԱՅԱԿԱՆ N 03 Ա 068831
ՀՎՀՀ 05509973
13.05.2005 ԹՎԱԿԱՆԻՆ ԳՐԱՆՑՎԱԾ
ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ԹԻՎ _____
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ԳՐԱՆՑՎԵԼ Է
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐԻ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ
ԿՈՂՄԻՑ

«____» _____2015 Թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ

«ԱՐԹՈՒՐ ԱԼԵՔՍԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀՈՒՆԱ-ՀՌՈՄԵԱԿԱՆ ԸՄԲՇԱՄԱՐՏԻ ՄԱՆԿԱՊԱՏԱՆԵԿԱՆ ՄԱՐԶԱԴՊՐՈՑ»

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

(ՆՈՐ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՄԲ)

Ք. ԳՅՈՒՄՐԻ 2015 ԹՎԱԿԱՆ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի «Արթուր Ալեքսանյանի անվան հունա-հռոմեական ըմբշամարտի մանկապատանեկան մարզադպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունը (այսուհետ՝ մարզադպրոց) շահույթ ստանալու նպատակ չհետապնդող, իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող, ոչ առևտրային կազմակերպություն է, որն իրականացնում է ուսումնամարզական ծրագրեր, առնվազն 14 խմբի առկայության, 1 կամ ավելի սպորտաձևերի բաժանմունքներով:

2. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի «Արթուր Ալեքսանյանի անվան հունա-հռոմեական ըմբշամարտի մանկապատանեկան մարզադպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունը հանդիսանուում է Գյումրու քաղաքապետարանի «Հունա-հռոմեական ըմբշամարտի մարզադպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպության (գրանցման համարը՝ 29.210.02153, վկայական՝ 03Ա068831, գրանցման ամսաթիվ՝ 13.05.2005թ.) իրավահաջորդը:

3. Կազմակերպության իրավաբանական հասցեն (գտնվելու վայրն) է՝ ք. Գյումրի, Երևանյան խճ. 91/1 (փոստային ինդեքս՝ 3112):

4. Մարզադպրոցը ստեղծված է համարվում ՀՀ օրենքով սահմանված կարգով պետական գրանցման պահից, առանց ժամկետային սահմանափակման նրա գործունեությունը կարգավորվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, Հայաստանի Հանրապետության կողմից վավերացված միջազգային պայմանագրերով և սույն կանոնադրությամբ:

5. Մարզադպրոցը որպես սեփականություն ունի առանձնացված գույք և իր պարտավորությունների համար պատասխանատու է այդ գույքով, նա պատասխանատվություն չի կրում հիմնադրի պարտավորությունների համար: Հիմնադիրը պատասխանատվություն է կրում մինչև մարզադպրոցի պետական գրանցումը ծագած կազմակերպության ստեղծման հետ կապված պարտավորությունների համար:

6. Մարզադպրոցն այլ կազմակերպության հիմնադիր կամ մասնակից կարող է հանդիսանալ միայն հիմնադրի որոշմամբ:

7. Մարզադպրոցն ունի ՀՀ պետական զինանշանի պատկերով և կազմակերպության հայերեն անվամբ կլոր կնիք, ձևաթղթեր, խորհրդանիշ, անհատականացման այլ միջոցներ, ինքնուրույն հաշվեկշիռ և հաշվարկային հաշիվ բանկերում:

8. Մարզադպրոցի անվանումն է՝

հայերեն լրիվ՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի «Արթուր Ալեքսանյանի անվան հունա-հռոմեական ըմբշամարտի մանկապատանեկան մարզադպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպություն:

II. ՄԱՐԶԱԴՊՐՈՑԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Մարզադպրոցի նպատակն ու խնդիրները՝

ա) ֆիզիկական կուլտուրայի և սպորտի միջոցներով պարապողների առողջության պահպանում ու ամրապնդում,

բ) հայրենիքի պաշտպանությանը պատրաստ երիտասարդության ֆիզիկական պատրաստականության ապահովումը,

գ) ընտրված մարզաձևում պարապողների սպորտային ընդունակությունների կատարելագործում,

դ) ՀՀ ազգային հավաքական թիմերի համար հերթափոխի պատրաստում,

ե) հանրակրթական դպրոցների հետ սերտ կապի հաստատումը և ֆիզկուլտուրայի արտադասարանական աշխատանքների, ֆիզկուլտուրային-առողջարարական միջոցառումների կազմակերպման օժանդակում:

III. ՄԱՐԶԱԴՊՐՈՑԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ ԵՎ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

9. Մարզադպրոցի գործունեության առարկան համապատասխան ուսումնական ծրագրերի պահանջների իրականացումն է:

10. Մարզադպրոցում գործում են սկզբնական պատրաստականության, ուսումնամարզական, սպորտային կատարելագործման և սպորտային բարձրագույն վարպետության խմբեր:

11. Մարզադպրոցի աշխատանքի հիմնական ցուցանիշ է համարվում՝

ա) պարապողների խմբի կայունության պահպանումը,

բ) վարպետ թիմերի և ազգային հավաքական թիմերի համալրումը,

գ) աշխարհի, Եվրոպայի, օլիմպիական խաղերի մասնակից մարզիկների պատրաստումը:

12. Հանրապետության հավաքական թիմերի պարբերաբար համալրելու, աշխարհի, Եվրոպայի, օլիմպիական խաղերի մասնակից պատրաստելու դեպքում մարզադպրոցը, նրա առանձին բաժանմունքները կարող են ստանալ Օլիմպիական հերթափոխի կարգավիճակ: Հերթական Օլիմպիական խաղերի ավարտից հետո, համապատասխան ցուցանիշների համաձայն, լիազորված պետական մարմնի կողմից շնորհվում կամ վերահաստատվում է մարզադպրոցի կարգավիճակ:

13. Մարզադպրոցի ուսումնական տարին սկսվում է սեպտեմբերի 1-ից, գործում է ամբողջ տարվա ընթացքում՝ ապահովելով 51-52 շաբաթվա համար նախատեսված շուրջամյա մարզումներ, որոնցից 5-6 շաբաթը համապատասխան միջոցներ ունենալու դեպքում ամառային և ձմեռային մարզական առողջարարական ճամբարային պայմաններում: Մարզադպրոցի համակազմի և ուսումնական խմբերի հրամանագրումը կատարվում է ամեն տարի հիմնականում մինչև հոկտեմբերի 1-ը:

14. Մարզադպրոցի ուսումնամարզական գործընթացը կառուցվում է առանձին մարզձևերի ուսումնական ծրագրերի պահանջների հիման վրա, իսկ ուսումնական խմբերում ընդգրկվածների քանակը, ուսումնական աշխատանքների կանոնակարգը սահմանվում են համաձայն սույն կանոնադրության:

15. Մարզադպրոցի ուսումնամարզական գործընթացի հիմնական ձևերն են՝ խմբակային ուսումնամարզական և խմբակային տեսական պարապմունքները, աշխատանքը անհատական պլանով, բժշկավերականգնիչ միջոցառումները, մասնակցությունը մրցույթներին, հավաքներին մարզական-առողջարարական ճամբարներում:

16. Մարզադպրոցը կազմակերպում է ուսումնամարզական հավաքներ՝

ա) հանրապետական մրցումներին նախապատրաստվելու համար,

բ) միաջազգային մրցումներին նախապատրաստվելու համար,

գ) ընդհանուր և հատուկ ֆիզիկական պատրաստականության նպատակով:

17. Մարզադպրոցը հարկերը, տուրքերը և պարտադիր այլ վճարները վճարում է շահույթ ստանալու նպատակ չհետապնդող կազմակերպությունների համար նախատեսված կարգով և չափով:

18. Մարզադպրոցն իրավունք ունի օրենքով սահմանված կարգով միջազգային կապեր հաստատել արտերկրյա մարզական կազմակերպությունների հետ, կազմակերպել

սպորտային պատվիրակությունների փոխայցելություններ, համատեղ միջոցառումներ, համաձայնագրեր կնքել մարզչական-մանկավարժական աշխատանքների և սովորողների փոխանակման վերաբերյալ:

19. Մարզադպրոցը կարող է զբաղվել հիմնադրի կողմից սահմանված ձեռնարկատիրական գործունեությամբ հետևյալ տեսակներով՝

ա) լրացուցիչ մանկավարժական, ֆիզկուլտուրային-առողջարարական ծրագրերի իրականացում,

բ) համակարգչային ծրագրերի ուսուցման կազմակերպում,

գ) ճամբարների կազմակերպում:

IV. ՄԱՐԶԱԴՊՐՈՑԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

20. Մարզադպրոցի կառավարումն իրականացնում են հիմնադրամները, նրա կողմից լիազորված պետական կառավարման մարմինը եվ կազմակերպության գործադիր տնօրենը: Մարզադպրոցի լիազորված մարմնի ղեկավարը, մարզադպրոցի գործադիր մարմինը, նրա տեղակալը, մարզադպրոցի անունից հանդես գալիս պետք է գործեն բարեխղճորեն եվ ողջամիտ՝ ի շահ իրենց մարզադպրոցի:

21. Մարզադպրոցի հիմնադիրն ունի մարզադպրոցի գործունեությանը եվ կառավարմանը վերաբերող ցանկացած հարցի վերջնական լուծման իրավունքը, բացառությամբ օրենքովնախատեսված դեպքերի: Լիազորված պետական մարմինն իրականացնում է կազմակերպության ընդհանուր կառավարումը, ապահովում է նրա բնականոն գործունեությունը եվ պատասխանատվություն է կրում դրանց չկատարման կամ անպատշաճ իրականացման համար:

22. Լիազորված պետական մարմինը՝

ա) սույն կանոնադրությամբ սահմանված կարգով իրականացնում է նրա կառավարման մարմինների ձ?ավորումը եվ նրանց լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը:

բ) հաստատում է մարզադպրոցի կառուցվածքը և աշխատանքների թիվը

գ) իրականացնում է մարզադպրոցի գործունեության վերահսկումը

դ) կասեցնում կամ ուժը կորցրած է ճանաչում մարզադպրոցի գործադիր մարմնի՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին հակասող հրամանները, հրահանգները, կարգադրություններն ու ցուցումները.

ե) լսում է մարզադպրոցի գործունեության մասին հաշվետվությունները, քննում է նրանց գործունեության վերստուգման արդյունքները.

զ) վերահսկողություն է իրականացնում մարզադպրոցին ամրացված պետական սեփականության օգտագործման և պահպանության նկատմամբ:

է) վերահսկողություն է իրականացնում մարզադպրոցի սեփականության պահպանման նկատմամբ, իսկ օրենքով, հիմնադրի որոշմամբ կամ սույն կանոնադրությամբ նախատեսված դեպքում համաձայնություն է տալիս նրա գույքի օտարման կամ վարձակալության հանձնման համար.

ը) հաստատում է մարզադպրոցի տարեկան հաշվետվությունները, տարեկան ծախսերը և հաշվեկշիռը.

թ) իրականացնում է սույն օրենքով, հիմնադրամի որոշումներով և սույն կանոնադրությամբ նախատեսված այլ գործառություններ:

23. Մարզադպրոցի ընթացիկ գործունեության ղեկավարումն իրականացնում է գործադիր մարմինը (տնօրենը), որը Հայաստանի Հանրապետության այն գործունակ չափահաս քաղաքացին է և ունի բարձրագույն ֆիզկուլտուրային կամ մանկավարժական կրթություն և մարզական կոչում ու հինգ տարուց ոչ պակաս մարզչական աշխատանքի փորձ: Տնօրենը նշանակվում է և ազատվում է լիազորված պետական մարմնի կողմից: Մարզադպրոցի տնօրենը ղեկավարում է մարզադպրոցի գործունեությունը և կրում է պատասխանատվություն ՀՀ օրենքները, իրավական ակտերը, լիազորված պետական մարմնի որոշումները սույն կանոնադրության պահանջները չկատարելու կամ թերի կատարելու համար:

24. Մարզադպրոց գործադիր մարմինը՝ տնօրենը

ա) առանց լիազորագրի հանդես է գալիս մարզադպրոցի անունից և ներկայացնում է նրա շահերը, կնքում է գործարքներ,

բ) սույն կանոնադրությամբ սահմանված կարգով տնօրինում է մարզադպրոցի գույքը և ֆինանսական միջոցները,

գ) տալիս է լիազորագրեր,

դ) աշխատանքի է նշանակում է և աշխատանքից է դպրոցի աշխատողներին, նրանց նկատմանբ կիրառում կարգապահական տույժեր և խրախուսական միջոցներ,

ե) բանկերում բացում է հաշվարկային հաշիվներ,

զ) սահմանում է մարզադպրոցիկառուցվածքն ու կառուցվածքային ստորաբաժանումների իրականությունը, հաստատում է մարզադպրոցի մասնաճյուղերի կանոնադրությունը,

ը) ապահովում է ներքին աշխատանքային կարգապահության կանոնների, սանիտարական նորմերի, աշխատանքի պահպանության և անվտանգության տեխնիկայի պահանջների կատարումը:

25. Տնօրենը չի կարող զբաղեցնել այլ պաշտոն, կամ կատարել վճարովի այլ աշխատանք, բացի գիտական, մանկավարժական և ստեղծագործական աշխատանքից: Գործադիր մարմինը լրիվ գույքային պատասխանատվություն է կրում իր մեղքով մարզադպրոցին պատճառած վնասի համար:

26. Տնօրենը պարտավոր է չկատարել հիմնադրի, լիազորված պետական մարմնի օրենսդրությանը հակասող որոշումները, կարգադրությունները, հրամանները, հրահանգները և դրանց չկատարման համար չի կարող ենթարկվել պատասխանատվության:

27. Մարզադպրոցի հետ կնքվում է պայմանագիր, որը հիմնադրի անունից ստորագրում է լիազորված մարմինը: Պայմանագրում սահմանվում են կազմակերպության տնօրենի իրավունքները, պարտականությունները, պատասխանատվությունը և փոխհարաբերությունները լիազորված պետական մարմնի հետ, նրա աշխատանքի վարձատրման պայմանները, պայմանագրի դադարման << Պետական ոչ առևտրային կազմակերպության մասին>> ՀՀ օրենքով նախատեսված բոլոր հիմքերը և այլ դրույթներ, որոնք պայմանավորվող կողմերը անհրաժեշտ կգտնեն: Պայմանագրի դրույթները չեն կարող հակասել ՀՀ աշխատանքային օրենսգրքի պահանջներին, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:

28. Տնօրենի բացակայության դեպքում այդ լիազորություններն իրականացնում է փոխտնօրինությունը:

29. Տնօրենի լիազորությունները դադարեցվում են իրավասու մարմնի որոշմամբ եթե՝

ա) նա դիմում է այդ մասին,

բ) լրացել է նրա 65 տարին,

գ) նա իր գրավոր հանձնարարությամբ ընտրվել կամ նշանակվել է այլ պաշտոնում, կամ անցել է իր պաշտոնի հետ անհամատեղելի այլ աշխատանքի,

դ) ժամանակավոր անաշխատունակության հետևանքով նա ավելի քան չորս ամիս անընդմեջ չի ներկայացել աշխատանքի,

ե) նա ավելի քան երեք օր անընդմեջ անհարգելի պատճառներով չի ներկայացել աշխատանքի,

զ) նա իր գործառույթներն իրականացնելիս պետական կազմակերպությանը կամ պետությանն իր մեղքով հասցրել է վնաս, որի գումարը գերազանցում է պետական կազմակերպությանն սեփականության իրավունքով պատկանող գույքի արժեքի հինգ տոկոսը,

է) դատարանի օրինական ուժի մեջ մտած վճռի հիման վրա նա ճանաչվել է գործունակ, սահմանափակ գործունակ, անհայտ բացակայող կամ մահացած,

ը) նա կորցրել է Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը,

ը/ա դատական կարգով նրա ղեկավարած պետական կազմակերպությունը ճանաչվել է սնանկ կամ այն ունի դատական կարգով որոշված և դատարանի կողմից համապատասխան վճիռն ընդունվելուց հետո վեց ամսվա ընթացքում, իր մեղքով չկատարված գույքային պարտավորությունը,

ը/բպետական կազմակերպության կողմից վճարման ենթական հարկերը կամ սոցիալական ապահովագրության հիմնադրամի վճարները իր մեղքով՝ սահմանված ժամկետից հետո հաշվետու ժամանակաշրջանում չի վճարել,

ը/գմեկ տարվա ընթացքում օրենքի խախտման համար ենթարկվել է կրկնակի կարգապահական պատասխանատվության:

30. Փոխտնօրեն ուսումնական գծով (այսուհետ՝ ուսմասվար) աշխատանքի է նշանակվում և աշխատանքից ազատվում է տնօրենի կողմից բարձրագույն ֆիզկուլտուրային կրթության և մարզչական աշխատանքի առնվազն հինգ տարվա աշխատանքային փորձառություն ունեցող անձը:

Ուսմասվարը պատասխանատվություն է կրում ուսումնասպորտային գործընթացի կազմակերպման, ուսումնական փաստաթղթերի վարման, ուսումնական խմբի ճիշտ կոմպլեկտավորման մարզիչ-մանկավարժների որակավորման բարձրացման համար և այլն: Ուսմասվարն իրականացնում է վերահսկողություն ուսումնասպորտային գործընթացի անցկացման, պարապողների կողմից ծրագրային նյութի յուրացման նկատմամբ:

31. Ավագ հրահանգիչ-մեթոդիստը և հրահանգիչ-մեթոդիստը նշանակվում են բարձրագույն մասնագիտական կրթությամբ, առնվազն երեք տարվա մարզչական աշխատանքի փորձառություն ունեցող մասնագետների թվից:

Ավագ-հրահանգիչը և հրահանգիչ-մեթոդիստը պատասխանատվություն են կրում մարզական գործընթացի կազմակերպման, մարզիչ-մանկավարժների աշխատանքի առաջավոր փորձի ընդհանրացմանը վերաբերող մեթոդական աշխատանքների կազմակերպման համար: Նրանք պատասխանատվություն են կրում նաև դաստիարակչական աշխատանքների և մարզիչ-մանկավարժների մասնագիտական գրականությունը՝ մեթոդական հանձնարարականներին հաղորդակից դարձնելուն:

32. Տնօրենին, ուսմասվարին, ավագ-հրահանգչին և ավագ-մեթոդիստին թույլատրվում է նույն դպրոցում հիմնական աշխատանքի ժամերի ընթացքում վարել մարզչական դրույքի հաշվարկով:

33.Մարզադպրոցի մարզչական-մանկավարժական կազմը, որպես կանոն, համալրվում է ֆիզկուլտուրային կրթություն ունեցող մասնագետների թվից:

Մարզիչ-մանկավարժն իրականացնում է՝

ա) մարզական վարպետության հետագա բարձրացման համար պարապողների թվից հեռանկարային երեխաների ընտրությունը,

բ) ուսումնասպորտային գործընթացի կազմակերպում, համաձայն ուսումնական ծրագրի,

գ) պարապմունքների հաճախումների հաշվառում:

Մարզիչ-մանկավարժը պատասխանատվություն է կրում մարզական գործընթացի անվտանգության ապահովման, պարապողների կողմից տարատեսակ խթանիչների ընդունման դեպքերի բացառման համար և այլն:

34. Մարզադպրոցի տնօրենի հրամանով նշանակվում են բաժանմունքի ավագ մարզիչ-մանկավարժներ, եթե տվյալ բաժամունքներն ունեն առնվազն երեք մարզիչ-մանկավարժի հաստիք:

35. Ավագ մարզիչ-մանկավարժը, բացի մարզիչ-մանկավարժի պարտականություններից, պատասխանատվություն է կրում նաև բաժանմունքի մարզական գործընթացի պլանավորման, աշխատանքի առաջավոր մեթոդների ներդրման, ծրագրային պահանջների վերահսկման, մաժանմունքի միջոցառումների կազմակերպման ու անցկացման համար:

36. Առաջադրված մանկավարժական խնդիրներն իրականացնելու համար մարզադպրոցում ստեղծվում է մարզչական խորհուրդ: Մարզչական խորհուրդը ղեկավարում է ավագ մարզիչ-մանկավարժը:

37. Մարզադպրոցի պարապողների բժշկական սպասարկումն իրականացվում է բժշկական անձնակազմի միջոցով:

V. ՄԱՐԶԱԴՊՐՈՑԻ ՊԱՐԱՊՈՂՆԵՐԸ

38. Մարզադպրոցի սովորողները կարող են լինել առողջական շեղումներ չունեցեղ երեխաները, դեռահասները, պատանիները և երիտասարդները: Մարզադպրոց ընդունվողները ներկայացնում են դիմում՝ ծնողի համաձայնությամբ, բժշկի տեղեկանք՝ սպորտով պարապելու թույլտվության վերաբերյալ:

39. Ընդունելության ժամանակ մարզադպրոցի տնօրինությունը պարտավոր է ծնողներին (նրանց օրինական ներկայացուցիչներին) ծանոթացնել հաստատության փաստաթղթերին, որոնք կանոնակարգում են մարզադպրոցի գործունեությունը:

40. Մարզադպրոցն իրավունք ունի աշխատելու հետևյալ խմբերով.

ա) նախապատրաստական՝ I և II տարի,

բ) ուսումնամարզական՝ I, II, III, IV, V տարի,

գ) սպորտային կատարելագործման՝ I, II և III տարի,

դ) մարզական բարձրագույն վարպետության՝ I, II և III տարի:

41. Սովորողների ընդունելությունը, խմբերի կազմը և շրջանավարտ դառնալը ձևակերպվում է մարզադպրոցի տնօրենի հրամանով:

42. Սովորողների փոխադրումը հաջորդ ուսումնական տարի իրագործվում է պահանջվող նորմաների հանձնման, մարզչական խորհրդի որոշմամբ, տնօրենի հրամանով:

43. Մարզական վարպետության հետագա բարձրացման նպատակով ՕՀՈՒ, հավաքական թիմերի կենտրոններ, վարպետ թիմեր տեղափոխված մարզիկները հինգ տարի(տեղափոխման օրվանից) կարող են համալրվել ավելի ցածր պատրաստականություն ունեցող այլ մարզիկով:

44. Մարզադպրոցի սաներն իրավունք ունեն օգտվելու մարզադպրոցի կառույցներից , գույքից և ըստ սահմանված կարգի ստանալ համապատասխան հանդերձանք:

45. Մարզադպրոց ընդունվողների և մարզվորղների տարիքը պետք է համապատասխանի սույն կանոնադրության պահանջներին:

VI. ՄԱՐԶԱԴՊՐՈՑԻ ԳՈՒՅՔԸ ԵՎ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

46. Մարզադպրոցը ֆինանսավորվում է հիմնադրի կողմից, նրա սեփականությունը ձևավորվում է հիմնադրի որոշմամբ՝ սահմանված չափով հանձնված գույքից: Մարզադպրոցն իրավունք ունի իր հայեցողությամբ տիրապետելու, տնօրինելու և օգտագործելու սեփականության իրավունքով իրեն պատկանող գույքը: Հիմնադիրն իրավունք ունի հետ վերցնել իր կողմից մարզադպրոցին ամրացված գույքը: Մարզադպրոցի սեփականության վրա բռնագրավում կարող է իրականացնել միայն դատական կարգով:

47. Մարզադպրոցն իրավունք չունի ամրացված գույքը կամ դրա նկատմամբ իր իրավունքներն օտարել, գրավ դնել, հանձնել անհատույց օգտագործման:

Մարզադպրոցն իրավունք ունի իրեն ամրացված գույքը պետության անունից հանձնել վարձակալության, եթե դա չի արգելված հիմնադիր որոշմամբ: Ամրացված գույքի վարձակալության ժամկետը մեկ տարուց ավել չի կարող սահմանվել, բացառությամբ հիմնադրի կողմից սահմանված դեպքերի:

Ամրացված գույքի օգտագործման արդյունքում մարզադպրոցի ստացած եկամուտները մարզադպրոցի սեփականությունն են:

Մարզադպրոցին ամրացված գույքի օգտագործման ընթացքում առաջացած անբաժանելի բարելավումները հանդիսանում են հիմնադրի սեփականությունը:

48. Մարզադպրոցի գույքը ստեղծվում են հետևյալ աղբյուրների հաշվին՝

ա) պետական գույք, որը հանձնվել է դպրոցին անհատույց,

բ) պետական բյուջեից պետական պատվերի համար, ինչպես նաև այլ ձևերով հատկացված միջոցներ,

գ) ՀՀ և օտարերկրյա պետությունների իրավաբանական և ֆիզիկական անձանց նվիրատվություններից և նպատակային մուծումներից:

դ) ՀՀ օրենսդրությամբ չարգելված այլ աղբյուրներից:

VII. ՄԱՐԶԱԴՊՐՈՑԻ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ, ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԿԱՐԳԸ

49. Մարզադպրոցը պարտավոր է ունենալ հետևյալ փաստաթղթերը՝

ա) սովորողների ցուցակ՝ հաստատված տնօրենի հրամանով,

բ) մարզադպրոցի հրամանագիր,

գ) ըստ առանձին խմբերի դասամատյաններ,

դ) ուսումնամարզական պարապմունքների պլան- գրաֆիկ,

ե) դասացուցակ

զ) մարզական արդյունքների հաշվառման մատյան,

է) մարզական միջոցառումների օրացուցային պլան,

ը) սովորողների անձնական գործեր, բժշկական քարտեր,

թ) աշխատողների անձնական գործեր,

ժ) տարիֆիկացիոն ցուցակ,

ի) խորհրդի նիստերի արձանագրություններ,

լ) անցկացված մրցումների արձանագրություններ:

50. Մարզադպրոցը յուրաքանչյուր տարի ներկայացնում է ՀՀ ազգային վիճակագրական ծառայության կողմից հաստատված վարչական վիճակագրական հաշվետվություն՝ համաձայն պահանջվող ձևի և ժամկետների:

VIII. ՄԱՐԶԱԴՊՐՈՑԻ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ԼՈՒԾԱՐՈՒՄԸ

51. Մարզադպրոցը կարող է վերակազմավորվել հիմնադրի որոշմամբ, ՀՀ քաղաքացիական օրենսգրքով սահմանված կարգով: Մարզադպրոցը կարող է վերակազմավորվել 100 տոկոս պետական մասնակցությամբ ընկերության կամ հիմնադրամի:

52. Մարզադպրոցը դատական կարգով կարող է վերակազմակերպվել օրենքով սահմանված դեպքերում և կարգով:

53. Մարզադպրոցի լուծարմամբ նրա գործունեությունը դադարում է, առանց իրավունքների և պարտականությունների՝ իրավահաջորդության կարգով այլ անձանց անցնելով:

54. Մարզադպրոցը կարող է լուծարվել հիմնադրի որորշմամբ, դատական կարգով ՀՀ քաղաքացիական օրենսգրքով սահմանված կարգով: Մարզադպրոցը կարող է լուծարվել նաև սնանկության հետևանքով:

55. Մարզադպրոցը դասական կարգով կարող է լուծվել միայն օրենքով նախատեսված դեպքում և կարգով:

56. Մարզադպրոցի լուծման դեպքում մարզադպրոցի պարտատերերի պահանջները բավարարելուց հետո մնացած գույքն ուղղվում է պետական բյուջե: